



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԵՒԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՆՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԶՄԻՌՆԵՒԱՅ ԾԱՌԱԹ 21 ՕԳՈՍՏՈՍ 1876 թ. 1047

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ի Կ. Պօլսոյ և յԵւրոպոյ հասեալ զանազան հեռագրութիւնքն կը հաւաստեն թէ Միլան իշխանն՝ պաշտօնական կերպիւ, խնդրեալ է ի մեծ տէրութեանց Եւրոպոյ՝ բարեխօս լինել մարդասիրարար առաջի Բարձրագոյն Դրան, որպէսզի անմիջապէս վախճան տրուելով թշնամական դործոց, բանախօսութիւնքն սկսին ի վերայ պայմանաց հաշտութեան :

Սերվիոյ կառավարութեան այս խնդիրն ի վերջոյ կը պատուէր. քանզի անկարելի էր որ իրենց փոքրիկ իշխանութիւնն դէմ դնէ օսման տէրութեան զօրաբանակին, որ շատ անգամ յաղթանակաւ պիտի մտնէր ի Պէլկրատ՝ ի մայրաքաղաքն Սերվիոյ : Վասնզի օսմանեան զօրաբանակաց ընդհանուր հրամանատար Ապտալ-ֆէրիմ փաշային պատերազմական յատակաքիժը յոյժ իմաստութեամբ յղացեալ է . որոյ ի վերայ սքանչանալով Գերմանիոյ Ֆէլտ-մարշալ մեծահամբաւ տը Մոլթ-թէ կոմսն, յատուկ նախապաշտով, իւր խնդակցութիւնն յայտնեալ է Ապտալ-ֆէրիմ փաշային :

Փարիզի ԼԱ Լիպէրթէ անուն օրագրոյն գրածին նայելով՝ Արեւելեան խնդրոյն լուծումն կամ Սերվիոյ պատերազմին դադարումն՝ ևրոպական տէրութեանց խորհրդակցութեամբը պիտի կարգադրուի շուտով : Այս խորհրդակցութիւնն՝ որ իրեն սկզբունք պիտի ունենայ, կըմէ, զամբողջութիւնն Թուրքիոյ, պիտի աշխատի նշանակել հաւանութիւն Բարձրագոյն Դրան, զգործադրելի միջոցներն և զկարգադրութիւններն առ ի դադարեցնել զընդհիմամարտութիւնն այսինքն իրարու դէմ հակառակութիւնն ի մէջ մահճականաց և քրիստոնէից, և առ ի ապահովել այս վերջիններուն զկատարեալ հաւաստութիւնն առաջի օրինաց, ինչպէս նաև զընդունելութիւն նոցին առ ամենայն պաշտօնս տէրութեան, որք կրօնականի չեն վերաբերի : Սերվիոյ եւրոպական խորհրդակցութիւնն կը-

պարտաւորինաւ, կը յարէ վերոյիշեալ օրագրին, հոգ տանել առ ի գոհ ընել ըստ կարեւորն, զգործադր պարտաւորութեան Թուրքիոյ : Իսկ եթէ խորհրդակցութիւնն զանց ընէ այս հարկաւոր կէտերէն մին, իւր գործն անկատար պիտի լինի ու եւրոպական Թուրքիոյ դաւառացի հանդարտութիւնն տեղեկանաւ առ ամուր հիմանց վերայ հաստատեալ պիտի չլինի :

Կայսերական իրաւոյ մի, որ ի մօտ աւուրս հրատարակեցաւ, պատասխանատու կընէ զբոլոր հրամանատարս զօրաբանակաց և զպաշտօնական վասն ամեն ապօրինաւոր գործոց և դարտութիւնն զորս իրենց հրամանաց ներքեւ եղող զինուորքն ըստ պատահման, պիտի ընէին Սերվիոյ մէջ : Բարձրագոյն Դրան նախազգուշութեան այս տնօրէնութիւնն՝ իմաստուն կենցաղադրութեան գործ մըն է . որ միանգամայն կապացուցանէ զմարդասիրական զգացմունս օսմանեան նախարարաց, որոց ի ձեռս կը գտնուի տէրութեան սանձը :

«Վերջին լուրերն» զորս ընկալաք ի տեսարանէն պատերազմին, կըսէ ՏԷՊԱ օրագրին, ամենեւին երկարացութիւն մի չեն թողուր ի վերայ վախճանին արիւնահեղ կռուոյն, որում մեծ յանդգնութեամբ ձեռք զարկաւ Սերվիան : Նոյն իսկ Պէլկրատի մէջ չեն ուզեր ինքզինքնին խտրել անհիմն յուսով. ուստի Միլան իշխանն ուրիշ բանի վերայ չմտածեր այժմ՝ բայց միայն շուտով հաշտութիւն ընելու :

Ըստ ամենայն երևմանց մեծ տէրութիւնքն, որոց մէջ համաձայնութիւնն կը շարունակէ միշտ ի մասին կարգադրութեան Արեւելեան խնդրոյն, սիրով ընդունած են Միլան իշխանին աղաչանքն վասն հաշտութեան . քանզի Վէնայէն ամսոյս 16—28էն յուղարկեալ հեռագիր մի կը ծանուցանէ թէ դիւանագիտութիւնն (տիւրքոմանի) գործունեայ կերպիւ կաշխատի խաղաղութիւնը վերահաստատելու համար :

Ըստ նոր հեռագրի մը կայսեր. զօրաբանակն նոր յաղթութիւն մի ըրեր է Ալեքսանդրի առջև :

ԱԶԳԱՅԻՆ

ԳԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կ. Պօլսոյ ազգային վարչութեան կրօնական եւ քաղաքական ժողովոց :

Ազգային պատկառելի Երեսփոխանութեան քուէոմէն ի պաշտօն կոչուած Վարչութիւնն՝ իւր գործոց ասպարէզին մէջ ըստ կրօնեւ ժամանակ, առաջին պարտաւորութիւնն մը ունի կատարելու, այն է յայտնել իւր խորին երախտագիտութիւնը ի մասին այն վստահութեան աւանդին, որով Ազգ. հաճեցաւ զնա պատուել իւր օրինաւոր երեսփոխանութեան միջոցաւ :

Վարչութիւնն քաջամտօթ արդի դժուար պարագայից, որոց մէջ իրեն վիճակեցաւ ազգին գործոց մատակարարութիւնը, լիովին կը զգայ թէ որքան ծանր է այսպէս տարօրինակ ժամանակի մը մէջ ազգաւ վարչութեան ղեկն ստանձնել : Բայց նոյն իսկ այս պարագաներու դժուարութեան նկատմամբ ներքին չէր իրեն մերժել ազգային պատկառելի երեսփոխանութեան հրաւերն, առանց նուիրական պարտաւորութեան մը դէմ մեղանշելու :

Ահա այս զգացմամբ է որ նորընտիր վարչութիւնն, Ազգին վստահութեան վրայ դնելով իւր յոյսը, պաշտօն կընդունի :

Երօս. և Բաղ. ժողովները բերկրութեամբ կը տեսնեն նաև որ վարչութեան այս ծանր բեռը, զոր Ազգին սէրը և ազգային երեսփոխանութիւն վստահութեամբ իւր թիկնոց վրայ կը դնեն, ոչ նուազ պիտի թեթեւանայ, քանի որ բարեբաղդութիւն ունի տէրութեան և Ազգին ընդհանուր վստահութիւնն ու համարումը իրաւամբ վստելող ամենապատիւ Ներսէս Ս. Պատրիարք Հօր քաղցր հովանոյն ներքեւ պաշտօն վարելու, և քաջայայտ է որ Նորին Սրբազնութիւնը իր զօրաւոր և խոհական աշակցութեամբը պիտի ուղղէ ժողովոցս քայլերն ազգային յառաջդիմութեան ասպարիզին մէջ :

Արդ, վարչութիւնն իւր յանձն առած ծանր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅԱՌԱՋԱՐԱՆ ԵՒ ՅԱՆԿ ԳԼԽՈՑ

Զեաւգիր Ընդդէմ Պատմութեան Երեսփոխան (1)
Ձոր գրեաց պատուէի Տիգրան Հ. Թ. Սաւադեանց
գլխաւորն՝ Նախկին պատուոյ ժողովագրաց
պրօքի եւ Նախկին քարտուղար Պատրիարքարանի
պրօք Յակոբեանց վանացն Ս. Երուսաղէմի :

Ի ժամանակի յորում զպաշտօն քարտուղարութեան վարի յերուսաղէմ ի վանս սուրբ Յակոբեանց, խորհուրդ ընդ միտս իմանկաւ, առարկելու որ գործել զպաշտօն իմ, ի մատենի կարկանդակ զպատմութիւն սուրբ Գաղաքին հանդերձ ժամանակագրութեամբ : Եւ առ այս ունէի պատահելութիւնս եւ ժամանակի եւ մերձաւորութեան տեղոյ : Ի սոյն յաջողութեամբ կանխեցին ինձ և դէպք անակնկալք . յորս գլխաւորագոյն համարիմ զմատենագրարանին գիւտ, ի խորշս ուրք սենեկի վանացն ի խաւարափակ վայրի բարդս ի բարդս դիպեալկային մատենաքի հանդիս թողեալ որդանց և կերպոց . զորս յակնարկեալ միանգամ, ի միտ առի զկարեւորութիւնն նոցին, հանդերձեալ գալ ի պէտս առաջա-

դրութեան իմոյ : Արդէն ձեռնարկեալ էր իմ զպատմութեանս, մինչ բանք եղեն զայնմանէ առաջի Յովհաննու Պատրիարքի . ուրախացաւ ընդ այն, խրախուսեաց և խոստացաւ ի լոյս ընծայեցուցանել և յաւել ևս տալ ինձ հատուածս բանից և յիշատակագրութեանց գտեալ յառանձին մատենագրարանի իւրում, որ ոչ սակաւ նպաստեցին ինձ ի լուսաւորութիւն և յամբողջութիւն պատմութեանս :

Յընթացս երկարութեանս, մինչդեռ իմ դարձ արարեալ յերկիր ծննդեան իմոյ, հանգեաւ ի Տէր Յովհաննէս Պատրիարք . զոր յաջորդեալ Եսայեայ, առ որով միւս անգամ ելեալ էի յերուսաղէմ (1863), հրաման ետ ինձ յորինել զցանկ ձեռագիր մատենից իւրակերտ թանգարանին, առաւել քան 1700 հատորոց : Սոյն աշխատութիւն, որ տեւեաց ամս երկուս, լրումն ետ իմոյս գրասէր ըզձից և յուսոյ՝ նորանոր հատուածս բանից գտանելոյ ի նոսա : Եւ արդարեւ իսկ, թէպէտեւ ոչ ամբողջպէս, սակայն գէթ գուղնաքէի իմն պսակեցին զակնկալութիւնս իմ ի մասին պատրիարքական յաջորդութեան Ս. Աթոռոյն և պարագայից մատնաւոր ինչ դիպաց առ նոքօք եղելոց :

Զայնցեալ ի չափաւորութիւն հատութեանց իմոց յայս օրինակ երկս, ի գլխաւորաւ իմ յամենայն ազգս դժուարութեանց, գտանեմ կրկնակի տեսութիւնս դիպաց առաջի իմ, քաղաքականին և կրօնականին : Քանզի արդարեւ

իսկ զուրբ Բաղաքէն ճառ առեալ խօսել, է ճառել զնոյն իսկ զիրօնից . զի յամենայնի որ ինչ դէպք քաղաքականք հանդիպեալ տեսանին անդ, եթէ յաւուրս թաղաւորութեան Յուդայ որ նախ քան զԲրիտանոս, և եթէ որ ինչ յիս Բրիտանոսի անցին դէպք քաղաքականք, յամենայնի ի նոսա ոչ այլ ինչ նշմարի, բայց եթէ միջոցն իմն կրօնական, պաշտօնականութիւն կրօնի, թէպէտեւ փոխեալ իցէ այն ընդ այլեայլ տեսութեամբք, ստուերականին յաջորդելով իսկականն . և սոյն իսկ դարձեալ ընդ պէսպէս տեսութեամբ ակնարկեալ ի միում Աւետարանի երկրորդագուաց . որք բաժանեալ իւրաքանչիւր եկեղեցի, զիւրն նախապատուէ անցնիւր զիրօն և զնոյն թեմակոխէ նախաթոռ կացուցանել ի սուրբ Գաղաքին : Զսոյն է և մեզ տեսանել ի պատմութեանս, ի հինգերորդ դարէ քրիստոնէութեան սկիզբն կալեալ, ի ժողովոյ ասեմ Բաղկեդոնի, և մինչև ցայսօր անընդհատ յառաջ մատուցեալ վիճմունք անսպառք և ատելութիւնք քրիստոնէից առ միմեանս անվախճանք : Մինչ զի եթէ յանձն ոք առնոյր զամենայն զկաղ և զկուլ, որ ի կրօնական խտրութեան անտի մատենագրել, յերկարատիկ արդեւ հատորս ոչ բաւէր զամենայն բովանդակել :

Կամք ի մտի եղեալ ըստ կարի կատարեալ գործել զպատմութիւնս որ առաջիկայ, սկիզբն ետու ի հիմնարկութեան նորուն, անցեալ ընդ հակիրճ զնահապետօքն, զթաղաւորացն Յու-

(1) Այս ձեռագիր պատուական մատենան՝ զոր կը փախարէիք ի լոյս ընծայեալ տեսանէ զնորիս ազգային բարեբաղի միոյ, բաղկացեալ է ի քառասու 1511 երեսոց եւ բաժանեալ յութ գիրքս :

պաշտօնին ձեռք զարնելու միջոցին, պարտք կը համարի իւր ընթացից օգին և սկզբունքն ալ Ազգին հաղորդել ներկայ յայտարարութեամբ։

Նախ ըստ իւր պարտաւորութեան, Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ դաւանութեան և աւանդութեանց անարատութեան և անխախտութեանը հսկելու և կրօնական դժացումն զարգացնելու մտադիր պիտի ըլլայ, նոյնպէս նաև ազգային ընդհանուր շահուց, կալուածոց և ամեն սեպհականութեանց պահպանութեան և դատարարական զարգացման համար պէտք եղած դարմանները պիտի խորհի և անոնց դործադրութեանը պիտի հսկէ։

Վարչութիւնս, իւր սուղ ժամերն առօրեայ ընթացիկ և անհատական խնդիրներով գրաւել չտալու համար, կրօն և ֆաղ մասնաժողովներու կազմութիւնը որոշեց, պաշտօն տալով անոնց, որ շարաթը մէկ օր առօրեայ և անհատական մասնաւոր խնդիրներու կարգադրութեամբն զբաղելով, և անոնց նախաքննութիւնները ընելով յատուկ տեղեկագրով ժողովոյ վաւերացմանը ներկայացնեն, և խառն խնդիրները, խառն մասնաժողովոյ ձեռքով խառն ժողովոյ ներկայացնեն։

Այս դրութեամբ վարչութիւնս պատահական մասնաւոր խնդրոց զբաղմունքէն ազատ մնալով, ժամանակ և դիւրութիւն պիտի ունենայ Ազգին կենսական և հանրական կարեւորութիւն ունեցող խնդիրներովն զբաղելու։

Վարչութեան միւս ճիւղերուն կազմութեանը դալով, վարչութիւնս մեծ հոգ տարաւ որ այս ճիւղերն որոնցմով Սահմանադրութիւնը ուղած է ապահովել իւր հիմնական սկզբունքներէն մին, այն է աշխատութեան բաժանման սկզբունքն, այնպիսի կազմաւորութիւն մը ստանան, որով կարելի լինի անցեալէն աւելի ընդարձակութիւն տալ իւրաքանչիւրին ձեռնհասութեանը՝ իրեն պատկանած դործոց մատակարարութեան մէջ, և քաջ դիտարկով միանգամայն որ ժողովի մը անկարելի է արդիւնաւորապէս դործել առանց համաձայնութեան զինքն կազմող տարերաց մէջ, վարչութիւնս, իւր բոլոր ուշադրութիւնը նուիրեց ընտրութեանց մասին, որպէսզի վերոյիշեալ վարչական ճիւղերն, զգոն, ազգասէր, կարող, նա մասնաւորապէս իրարու համամիտ և համակիր տարրներէ բաղկանան։

Այսպէս ուրեմն կազմած ըլլալով իւր վարչական մեքենայն, վարչութիւնս բնաւ ջանք պիտի չկնայէ Ազգին շահերն անձնուիրաբար

դայ ճառեցի մինչև ի Մակարէացիան, և անտի ի Հերովդէս Մեծն, առ որով Թրկիչն մեր որոյ եկեալ այլափոխեաց զօրէնսն հին, ձուլեալ ի նոր կերպարաւորութիւն համակ Աստուածային. ընդ որում, ըստ դուշակեցւոյն իւրոյ, և քաղաքքն սուրբ հիմնովին քանդեալ աւերեցաւ և յաւաքակցող նորին վերածնաւ երուսաղէմն նոր, և տաճարն Տեառն նոր և զարմանաւոր։ Վասն այնորիկ հարկ եղև զմեծագունի այս փոփոխութեան զպատճառն, այն է Տեառն մերոյ Յիսուսի Գրիստոսի զկենսոյ որ յաշխարհիս, և ընդ դործս տնօրէնութեան և զվարդապետութիւնս, և զԱռաքելոց նորին զպրակտ ճառագրել ժամանակացոյց կարգաւ։

Մոյնն անընդմիջապէս զհետ դայ, որպէս ասացաք, աւեր քաղաքին ի Տիրոսէ, ցրումն հաւատացեցրց, և կրկին հաստատութիւն նոցա յաւերածս քաղաքին. առաքելապետութիւն Յակոբայ Տեառն եղբոր, և յաջորդութիւն նորին։ Այլ սոյն այս խնդիր առաքելական յաջորդաց, որպէս զայլս ի բանասիրաց ազգիս, նոյն և զիս ոչ սակաւ տառապեցոյց. քանզի կորուստ կարեւորագոյն յիշատակարանաց և վաղնջոցն դաւաղանագրոց փիհ մեծ արկանէ ի կարգս անդ յաջորդութեան զամաց բազմաւորաց։ Ձի ի կիսոյ Ե դարու մինչև ցամա 1311, այն է ցարդիս Պատրիարք յընթացս իւր սակաւ ինչ քան զուր գարուց, հաղիւ եթէ դտանիցին նշանակեալք ի դիւս մեր անուանք ուր ից պատրիարքաց, յորոյ և անոնք երկարացաւ

պաշտպանելու, և Ազգն անդ որը փնտալի և յառաջադիմութեան շաւղին մէջ առաջ տանելու։

Իւր առաջին հոգը պիտի լինի Ազգին կրթութեան ծաւալումը, զանի հաստատուն հիմանց վրայ աւանդելով, փոսնդի հոն պահուած է Ազգին ապագան։ Պատրիարքարանի երկմտքն կանոնաւորելու մտադիր պիտի լինի, հաստատելու եղանակը բարեւթելով և ծախքերն իմաստութեամբ տնտեսելով։

Ազգային դատարանին կանոնաւոր փնտալ մը տալու համար, բաց ի կրօնական տնտեսութեան օրինաց, դատաւարութեան օրինաց ծրագիր մը պատրաստելու և անոր իրաւասութեան ենթարկեալ խնդիրներն, առանց երկարաձգման արդարապէս կարգադրելու համար, պէտք եղած միջոցները գտնելու պիտի աշխատի։

Ազգային վանօթէից արդիւնաւոր դէրք մը տալու և յօդուտ ազգին ծառայեցնելու միջոցները պիտի խորհի, և հետեւապէս այն միտքանութիւններն որք Ազգին անձնուիրաբար կը ծառայեն, պաշտպանելու և նոցա ձեռնառու լինելու փոյթ պիտի ունենայ։

Խնչպէս նաև պիտի խրախուսէ անխտիր այն ամեն կարգէ անձինք, որք թէ մասնաւոր, և թէ հաւաքական ձեռնառութեամբք ազգին օգտակար կը հանդիսանան։

Եկեղեցականաց դիրքն ալ աղնուացնելու և բարձրացնելու պիտի ջանայ, անոնց դէմ յարուցելու անիրաւ յարձակմունքները և անարդական խրատումներն արգիլելով և եկեղեցական դասուն արդար իրաւունքները պաշտպանելու միջոցները խորհելով և ի դործ դնելով։

Արարատեան մայր Աթոռոյ և անոր վեհափառ Գաջակային հետ յարաբերութիւնները բարեւթ վիճակի մէջ պահելու ուշ պիտի դնէ։

Վարչութիւնս քաջ գիտելով որ ազգին քաղաքականութիւնն ու շահերը մի են և անբաժան ամեն ազգայնոց համար, և թէ մասնաւոր անհամաձայնութիւնները աւելի թիւրիմացութեան հետեւանք են, քան թէ սկզբանց տարբերութեանց կը յառաջանան, յատկապէս հոգ պիտի առնի այդ թիւրիմացութիւնները պարզելու և իւր ամեն դործոց համար այնպիսի միջոցներ ձեռք պիտի առնու, որ Սահմանադրութեան տրամադրութեանց և ազգային ժողովոյ որոշմանց ըստ ամենայնի համաձայն լինին։

Փոխադարձաբար, վարչութիւնս ալ իրաւունք ունի ազգայնոցմէ պահանջելու անկեղծ աջակցութիւն և մասնաւոր կատարեալ հնազանդութիւն առաջի օրինաց և օրինաւոր որոշմանց, վասնզի առանց այս փոխադարձ պայմա-

կանք։ Այսպէս ուրեմն ի յուրմտոյն տեղիս կարգ պատմութեան խրամատեալ մեծագոյն վըհօք, անշնորհ ի միմեանց և դիպացն կարգը և կապակցութիւնք եղելութեանց, որք ի բաղումն պատճառք և հետեւութիւնք միմեանց համարին։

Իսկ ի Սարգիս Պատրիարքէ և այսր ունիմք իրովին զցանկ յաջորդութեանն, գէթ որչափ հնար եղև մեղ ի յիշատակարանաց դրոցն զպաւտան որ ի դիրս պատմութեան Հ. Միքայէլի ջամբեան, լցուցանել։ Իսկ եթէ զինի մեր յաջորդիցն այլք և զայլս գտանել ի ստուգադայն վաւերագրոց, յաւելցեն ի ցանկն։ Ոմանք ի միտքանից սուրբ երեսօնագէտի, կամելով ճոխագոյնս երեւեցուցանել զՊատրիարքացն թիւ և ընուլ, կամ լաւ և՛ կարճել զանջրպետան նշանակեալ իմ վերագոյն, յաւելին զանուանս ոմանց Պատրիարք անուանեցր ի գիրս Աստիւնաց և յարձանագրութիւնս ևս, և կարգել զնոսա ի շարս Հայ Պատրիարքաց, առանց ապացուցանելոյ զայն։ Մեք չառաք և չառնումք յանձն զամենայն զգտեալ անուանս պատրիարքաց անխտիր հայացուցանել. լաւ համարիմք զթերին քան զօտարն իրիւ ազգային ընդունել։

Մի ի նշանաւոր դիպաց պատմութեանս է և խաչակրացն թագաւորութիւն, որ ի մազն եկեալ հասեալ ժի դարամտին սկիզբն առ։ Համառօտագոյնս յոյժ խօսեցան զմանէն ազգային պատմիչք մեր ժամանակակիցք, և այն ոչ կարգաւոր ոճով. վասնորոյ ոչ զանց արարի ճառա-

նաց անկարելի է տեսնել վարչութեանս և Ազգին մէջ այն գօզելի և յարատե ներդաշնակութիւնն որոյ վրայ խորհուած են ազգային բարօրութեան և յառաջադիմութեան յոյսերն։

Ազգային վարչութիւնը պարտաւոր ըլլալով պատկառելի հանդիսացնել ընդհանրութեան կամքն ու ազգին վստահութեանն ստանձնած յիշատակութիւնն, որոշած է բնաւ կուսակցութեանց և յախճան կրից անձնատար չընել իւր ազգեցութիւնը, այլ ամեն օրինաւոր միջոց ի դործ դնել ազգային վարչութեան պատկառ պահպանելու համար ընդդէմ ամեն տեսակ ճշմանց, խռովայոյղ շարժմանց և ապօրինաւոր յարձակմանց։

Կ. Պոլիս 30 Յուլիս 1876

Ի Դիմաց կրօն. Ժող. Ազգ. վարչութեան	Ատենապետ
Ատենադպիր	Ատենապետ
Յակոբ վար. Ս. Պապ Պապագեան։ Խորեհ վարդ.	
Ի Դիմաց ֆաղ. Ժող. Ազգ. վարչութեան	Ատենապետ
Ատենադպիր	Ատենապետ
Նուրեան։	Ս. Ապրո։

Իզմիր, 12—24 Օգոստոս 1876

Յարգոյ խմբագիր Արշալուսի Արարիկ։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՐԿՈՅ ՎԵՐՋԻ ԹԻՎԻՆ քաղաքական տեսութիւնը կարգացած ատենին յետագայ տողերու հանդիպեցանք, որոնք մեր ուշադրութիւնը գրաւեցին։ Յօդուածագիրը Արեւելի ներկայ թշուառ կացութեանը վրայօք կը խօսի, դատողութիւններ կընէ ու կըսէ, «առհասարակ արեւելեաց այս յոռի դրութեան բուն պատճառը երեւոյի պատմութիւնները՝ ցեղական հնադամանց կը վերադրեն. սեմական ցեղերն որ ընդհանրապէս բռնած են Ասիոյ մեծ մասն, բնութեան և երեւակայութեան առարկաներով յափշտակուած՝ իրական աշխարհին պահանջմանց, մարդու ճակատագրին վրայ գաղափար մը չունին։ Երազային աշխարհ մը կապրին, և ինչպէս մարդոց նոյնպէս տարբերայ խաղաղի կը դառնան։ Պրահմաններ, Պուտաներ, Զրադաշտներ, Ճինիզներ, Լէնկիլիմուրներ, Կըմիներ անդ այլ երբեք Լէնկիսաններ, Պրուտաներ, Գրոմիկներ»։ Ներուի մեզ քանի մը դիտողութիւններ ընել, և այն ուսանելու համար աւելի քան թէ բնեցել։

Ա. Բուսաւն է թէ սեմականք բնութեան երեւակայութեան առարկայներով յափշտակուած Իրական աշխարհի պահանջմանց վրայ գաղափար չունին։ Եթէ չենք սխալիր, գիտական մեթոդ (methode Scientifique) խոշոր սխալ մը կայ հոս, որ է բնութեան ու երեւակայութեան առարկաները մէկ դասի վերածել ու զանոնք ներհակ համարել Իրական աշխարհի երեւոյթներու։

Եթէ բնութեան առարկայները ըսելով իրական (reel) և առարկական (objective) այսինքն չօգտու-

գրել զմանէն սակաւ ի բողոքոյ, քաղաքական քառահաստոր դրոցն Միշտայ գաղղիացւոյ և յազգային պատմագրաց։ Ի սմո ունին տեսանել ընթերցողք զկենդանի պատկեր քրիստոնէութեան դարուցն այնոյիկ, որք ընդ անուամբ բարեպաշտութեան վրաւոց և զմեծութեան աշխարհի թիւին ունենին, պատրուակաւ աղատելոյ զուրք երկիրն ի ձեռաց այլադէմ ազգաց, գրոհ տուեալ ի Պաղեստին քաղաքաց և գաւառաց անեղեալ, և զմանէն զերեւանէն զօրութեամբ իւրեանց և յափշտակութեանց ընդհետ լինէին. և զանօրէնութիւնս, որ յաշխարհին իւրեանց անմանօթք էին ինքեանց, յԱրեւելս եկեալ կատարեցին, վաղու իսկ ընկեալ ի Պապից զանդործ մեղաց զթողութիւն։ Այլ այս ևս անուրանալի է, որպէս տեսցի, զի յարաբերութիւնք և աղբւրք որ հաստատեալ կացին ի մէջ երկուց աշխարհացն հնոց, նոր ինչ կենդանութիւն ետուն վաճառականութեան և նաւական արհեստին. նոր ի նորոյ ծանօթութիւնք երկրականք և գիւտք աշխարհաց ի վեր երեւեցան, առ որս առաջնորդեցին տեղեանք շահուց, զոր ծնաւ զառաջինն խաչակրացն նաւորութիւն։

Յանկանել սուրբ Բաղաքին միւսանդամ ի ձեռս օրգւոց Մահմետի աշխարհակալութեամբ Մալէտանի, և անտի մինչև ի վախճան ուրեւրորդի խաչակրութեան և անկանելոյ խաղաղ երկիրն սուրբ ի ձեռս Սուլթանացն եղիլտոյի առ որովք ի ձեռս բերին Պատրիարքունք Հայոց

